Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-195-19.06.2019-ՊԱ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 23-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին կետ.

«1.1) տուգանային միավոր.»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին կետ.

«4.1) տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում.»,

3) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) հատուկ իրավունքից զրկում.»:

Հոդված 2. Օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «Առարկաները» բառը փոխարինել «Տուգանային միավորը, առարկաները» բառերով:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 25.1-ին հոդվածով.

«**Հոդված 25.1. Տուգանային միավորը**

1. Տուգանային միավորները կիրառվում են ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ կատարած անձանց նկատմամբ՝ սույն օրենսգրքի հատուկ մասով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

2. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձին Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վարորդական վկայական ստանալու օրվանից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետը ավարտվելու օրվանից) մեկ տարի ժամկետով տրվում է 9 միավոր: Այլ պետությունում ստացած վարորդական վկայական ունեցող և բնակչության պետական ռեգիստրում հաշվառված օտարերկրացուն միավորները տրվում են բնակչության պետական ռեգիստրում հաշվառվելու օրվանից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետը ավարտվելու օրվանից): Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձին յուրաքանչյուր հաջորդ մեկ տարի ժամանակահատվածի համար տրվում է 9 միավոր, և նախորդ տարվա միավորների մնացորդը չի փոխանցվում հաջորդ տարի:

3. Ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտում ամրագրելու դեպքում վարչական իրավախախտում կատարած անձին տվյալ տարում (մեկ տարի ժամանակահատվածում) տրված ընդհանուր միավորներից ինքնաշխատ եղանակով հանվում են սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված իրավախախտման համար սահմանված տուգանային միավորները:

4. Տուգանային միավոր նախատեսող վարչական տույժ նշանակելու մասին որոշման գանգատարկումը չի կարող կանխել դրա իրավական հետևանքների վրա հասնելը տվյալ տարում կատարված և սույն օրենսգրքի 129.3-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների համար, եթե վարչական տույժ նշանակելու մասին որոշումը, գանգատի քննության արդյունքում, ուժի մեջ է մտել հաջորդող տարվա ընթացքում:

5. Այն դեպքում, եթե սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված իրավախախտման համար հանվող միավորները գերազանցում են անձին տրված միավորների մնացորդը, ապա տուգանային

միավորները հանվում են այդ մնացորդի չափով՝ անկախ տվյալ իրավախախտման համար սահմանված տուգանային միավորների չափից:

6. Սույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար որպես վարչական պատասխանատվության միջոց կիրառվում է 0.5, 1, 2, 3 կամ 4 տուգանային միավոր:»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 28.1-ին հոդվածով.

«**Հոդված 28.1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցումը**

1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցումը կարող է նշանակվել 1 ամսից մինչև 6 ամիս ժամկետով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 29. Հատուկ իրավունքից զրկումը**

1. Հատուկ իրավունքից զրկումը անձին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից կամ որսորդության իրավունքից ժամանակավոր զրկելն է:

2. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից կամ որսորդության իրավունքից զրկումը կարող է նշանակվել 1 ամսից մինչև 3 տարի ժամկետով:

3. Որսորդության իրավունքից զրկում չի կարող նշանակվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությունը ապրուստի հիմնական աղբյուրն է:»:

Հոդված 6. Օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) «, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը» բառերը փոխարինել «(լիզինգառուն) (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը) կամ «Ճանապարհային

երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքով նախատեսված՝ տրանսպորտային միջոցի շահագործող հանդիսացող անձը» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասություն. «Տուգանային միավորների ձևով նշանակվող վարչական տույժը կիրառվում է սույն մասում նշված անձանց նկատմամբ, եթե նրանք ունեն տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք:»:

Հոդված 7. Օրենսգրքի 35-րդ հոդվածի երկրորդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենսգրքի 123-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

2) 3-րդ մասի սանկցիայում «քառասնապատիկի» բառը փոխարինել «քսանապատիկի» բառով,

3) 4-րդ մասի սանկցիայում «երեսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով,

4) 6-րդ մասում «կամ 4-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառով:

Հոդված 9. Օրենսգրքի 123.1-ին հոդվածի 2-րդ մասի սանկցիայում «տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 123.3-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում «հնգապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերը:

Հոդված 11. Օրենսգրքի 123.5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «տասնապատիկի» բառը փոխարինել «հնգապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր» բառերը,

2) լրացնել 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի առնվազն մեկ նիշը փակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:»,

3) 4-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով:»,

4) 4.1-ին և 4.2-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել,

5) 5-րդ մասում «հարյուրապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր» բառերը,

6) 7-րդ մասում «հարյուրապատիկի» բառը փոխարինել «քսանիննապատիկի» բառով,

7) 10-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով:»,

8) 11-րդ մասը «այլ պատճառներով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ առնվազն մեկ նիշը փակելու դեպքերի,» բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 123.6-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով:

Հոդված 13. Օրենսգրքի 124-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

2) 5-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

3) 6-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

4) 8-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

5) 9-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

6) 11-րդ մասի սանկցիայում «հնգապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերը,

7) 13-րդ մասի սանկցիայում «տասնապատիկի» բառը փոխարինել «հնգապատիկի» բառով,

8) 14-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր» բառերով,

9) 17-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր» բառերով,

10) 18-րդ մասի սանկցիայում «երեսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր» բառերը,

11) 21-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր» բառերով,

12) 22-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր» բառերով,

13) 23-րդ մասի դիսպոզիցիան «տարածք» բառից հետո լրացնել «կամ «Հաշմանդամներ» ճանապարհային նշանով (ցուցանակով) կահավորված վայրում «Հաշմանդամ» ճանաչման նշանով չկահավորված տրանսպորտային միջոցը

կանգնեցնելը» բառերով, իսկ սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր» բառերով,

14) 26-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

15) 28-րդ մասի սանկցիայում «յոթնապատիկի» բառը փոխարինել «հնգապատիկի» բառով,

16) 31-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով:»,

17) 32-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

18) 35-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35. Տրանսպորտային միջոցների համընթաց հոսքերն իրարից բաժանող «հոծ գիծ» գծանշման պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի առջևի երկու անիվներն ամբողջությամբ չեն հատել գծանշումը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:»,

19) 37-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«37. «Կանգ-գիծ» գծանշման պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի անիվներից ոչ մեկն ամբողջությամբ չի հատել գծանշումը և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն

անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:»:

Հոդված 14. Օրենսգրքի 124.2-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում «երեսնապատիկի» բառը փոխարինել «քսանապատիկի» բառով:

Հոդված 15. Օրենսգրքի 124.3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր» բառերը,

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 16. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:»,

2) 3-րդ մասի սանկցիայում «հարյուրապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր» բառերը,

3) 4-րդ մասի սանկցիայում «երկուհարյուրապատիկի» բառը փոխարինել «քսաննհնապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 4 միավոր» բառերը,

4) 5-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով:»:

Հոդված 17. Օրենսգրքի 124.6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր» բառերով,

2) 3-րդ մասի սանկցիայում «երեսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով:

Հոդված 18. Օրենսգրքի 126-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. դիսպոզիցիայում «վեցերորդ» բառը փոխարինել «հինգերորդ» բառով,

բ. սանկցիայում «հարյուրհիսնապատիկի» բառը փոխարինել «քսաննինապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 4 միավոր» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մասով.

«1.1. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցը կամ թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլը ոչ սթափ վիճակում վարելը, եթե վարորդը միայն ալկոհոլի ազդեցության տակ է, և զանցանքը չի պարունակում սույն հոդվածի երկրորդից չորրորդ մասերի հատկանիշները՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 6 ամիս ժամկետով:»,

3) 2-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով:»,

4) 3-րդ մասի սանկցիայում «մեկ» բառը փոխարինել «2» թվով,

5) 4-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 2 տարի ժամկետով:»,

6) 5-րդ մասի դիսպոզիցիայից հանել «, երկրորդ կամ չորրորդ» բառերը,

7) 6-րդ և 7-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել,

8) 9-րդ մասում «0.4 գրամից» բառերը փոխարինել «0.2 գրամից» բառերով, իսկ «0.2 միլիգրամից» բառերը՝ «0.1 միլիգրամից» բառերով:

Հոդված 19. Օրենսգրքի 128-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված» բառերը,

2) 1-ին մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով:

Հոդված 20. Օրենսգրքի 129.2-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ներկայացնելու տրանսպորտային միջոցը հաշվառելը կամ» բառերը,

2) 3-րդ մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԱՊՊԱ պայմանագիր չունեցող տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրելը, եթե ԱՊՊԱ պայմանագիր ունենալը տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրելու՝ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր պայման է՝»:

Հոդված 21. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 129.3-րդ հոդվածով.

«**Հոդված 129.3. Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը**

1. Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը, այսինքն՝ սույն օրենսգրքի 123.3 հոդվածի 1-ին, 123.5 հոդվածի 1-ին, 1.1-ին, 5-րդ, 124 հոդվածի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ, 18-րդ, 21-23-րդ, 26-րդ, 124.3 հոդվածի 1-ին, 124.4 հոդվածի 2-4-րդ, 124.6 հոդվածի 1-ին, 126 հոդվածի 1-ին, 135.2 հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված արարք կատարելը, եթե այդ իրավախախտման համար

նախատեսված տուգանային միավորի և տվյալ տարում վարորդի նկատմամբ կիրառված տուգանային միավորների հանրագումարը կազմում է 9 կամ ավելի միավոր՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում՝ 6 ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով:»:

Հոդված 22. Օրենսգրքի 131-րդ հոդվածի 7-րդ մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով:

Հոդված 23. Օրենսգրքի 132-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

2) 2-րդ մասի սանկցիայում «հարյուրապատիկի» բառը փոխարինել «քսանիննապատիկի» բառով,

3) 3-րդ մասի սանկցիայում «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանիննապատիկի» բառով,

4) 4-րդ մասի դիսպոզիցիան «իրավունք չունեցող» բառերից հետո լրացնել «, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ այդ իրավունքից զրկված» բառերով, իսկ սանկցիայում «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանիննապատիկի» բառով,

5) 5-րդ և 6-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 24. Օրենսգրքի 135.2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «եռապատիկի» բառը փոխարինել «յոթնապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերը,

2) 2-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, իսկ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ՝ նաև տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով:

Հոդված 25. Օրենսգրքի 140-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «երեսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով,

2) 2-րդ մասի սանկցիայում «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով,

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

4) 4-րդ մասի սանկցիայում «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով,

5) 5-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով՝ սահմանափակող իրերի և առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

Հոդված 26. Օրենսգրքի 224-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «129.2,» թվից հետո լրացնել «129.3,» թվով,

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով սահմանված պաշտոնատար անձինք:»:

Հոդված 27. Օրենսգրքի 255-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Արձանագրությունը թվային եղանակով կազմելու դեպքում իրավախախտում կատարած անձի ստորագրությունը ստացվում է թվային եղանակով, իսկ նրա՝ բացատրություն տալու և դիտողություններ անելու իրավունքի իրացման փաստը և բովանդակությունն ամրագրվում են տեսաձայնագրման միջոցով:»:

Հոդված 28. Օրենսգրքի 264-րդ հոդվածի չորրորդ մասի առաջին և երկրորդ նախադասությունները հանել:

Հոդված 29. Օրենսգրքի 283-րդ հոդվածում՝

1) երկրորդ մասի առաջին պարբերությունում «երեք օրվա» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա» բառերով, իսկ 1-ին կետում «կամ հասցեատերը որոշումն ստանալու անդորրագրի վրա ստորագրել է որոշումն ստանալուց հրաժարվելու մասին» բառերը փոխարինել «կամ հասցեատերը հրաժարվել է որոշումն ստանալուց, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին» բառերով,

2) երրորդ մասի երկրորդ նախադասության «և ստորագրել հրաժարվելու մասին» բառերը փոխարինել «, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին» բառերով:

Հոդված 30. Օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասը «129.2-րդ,» թվից հետո լրացնել «129.3-րդ,» թվով:

Հոդված 31. Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասում «և 31» բառերը փոխարինել «, 28.1 և 29» բառերով:

Հոդված 32. Օրենսգրքի 291-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 33. Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասը «129.2,» թվից հետո լրացնել «129.3» թվով:

Հոդված 34. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 25.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 25.1

ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 303.1. Տուգանային միավոր կիրառելու մասին որոշումը կատարելու կարգը

1. Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նշանակելու մասին որոշումն ի կատար են ածում սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ոստիկանության պաշտոնատար անձինք՝ վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանում տուգանային միավորների չափի մասին տեղեկատվությունը մուտքագրելու միջոցով:

Հոդված 303.2. Տվյալ տարում տրված միավորները մասնակիորեն վերականգնելը

1. Տվյալ տարում տրված միավորների մնացորդը 3 և պակաս լինելու դեպքում անձն իր ցանկությամբ կարող է հանձնել վարորդական վկայական ստանալու տեսական քննություն:

2. Տեսական քննությունը դրական հանձնելու դեպքում տվյալ տարում նվազեցված միավորներից վերականգնվում է 2 միավոր:

3. Միավորները վերականգնելու նպատակով անձը կարող է քննություն հանձնել տվյալ տարում միայն մեկ անգամ:»:

Հոդված 35. Օրենսգրքի 305-րդ հոդվածում՝

1) երկրորդ մասում «224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 111, 123, 123.1,

123.3, 123.4, 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերի), 123.6, 123.7, 124, 124.1, 124.2, 124.3, 124.4, 124.6, 125, 126, 128, 129.2, 131, 132, 135.2, 140-րդ» բառերով,

2) 9-րդ և 10-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 36. Օրենսգրքի 307-րդ հոդվածի երրորդ մասում «224 հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում նշված» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 111, 123, 123.1, 123.3, 123.4, 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերի), 123.6, 123.7, 124, 124.1, 124.2, 124.3, 124.4, 124.6, 125, 126, 128, 129.2, 131, 132, 135.2, 140-րդ» բառերով:

Հոդված 37. Օրենսգրքի 29-րդ գլխի վերնագիրը «ԶՐԿԵԼՈՒ» բառից հետո լրացնել «, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ» բառերով:

Հոդված 38. Օրենսգրքի 314-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «զրկելու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերով,

2) 1-ին մասը «զրկելու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերով, իսկ «կետում» բառը փոխարինել «մասում» բառով:

Հոդված 39. Օրենսգրքի 315-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «զրկելու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերով,

2) առաջին մասի «Տրանսպորտային միջոցներ կամ փոքրաչափս» բառերը փոխարինել «Փոքրաչափս» բառով, իսկ «վարորդը կամ» և «տրանսպորտային միջոցներ կամ» բառերը հանել,

3) երկրորդ մասի «վարորդը կամ», «տրանսպորտային միջոցներ կամ» և «տրանսպորտային միջոցների կամ» բառերը հանել,

4) երրորդ մասի «վարորդը կամ» և «համապատասխանաբար ոստիկանության և» բառերը հանել,

5) չորրորդ մասի «Տրանսպորտային միջոցներ կամ փոքրաչափս» բառերը փոխարինել «Փոքրաչափս» բառով, իսկ «համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը և» բառերը հանել,

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու և տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու մասին որոշումներն ի կատար են ածվում վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանում կասեցման և զրկման մասին տեղեկատվությունը մուտքագրելու միջոցով:»:

Հոդված 40. Օրենսգրքի 317-րդ հոդվածում՝

1) վերնագրում «Հատուկ իրավունքից զրկելու» բառերը փոխարինել «Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերով,

2) առաջին մասն ուժը կորցրած ճանաչել,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետի առնվազն կեսն անցնելուց հետո անձն իր ցանկությամբ կարող է հանձնել վարորդական վկայական ստանալու տեսական քննություն: Տեսական քննությունը դրական հանձնելու դեպքում անձի՝ տրանսպորտային միջոցներ վարելու կասեցված իրավունքը վերականգնվում է:»:

Հոդված 41. Օրենսգրքի 318-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 42. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին կետի

«բ» պարբերության, 28-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի 1-5-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2020 թվականի սեպտեմբերի 1-ից: Մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը սույն օրենքով նախատեսված տուգանային միավորը, որպես վարչական տույժ, կիրառվում է միայն «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով քննության ենթակա գործերով:

2. Սույն օրենքը հետադարձ ուժ չունի:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձանց սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված 9 միավորը տրվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրը՝ մեկ տարի ժամկետով:

Կառավարություն

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 23-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին կետ.

«1.1) տուգանային միավոր.»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին կետ.

«4.1) տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում.»,

3) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) հատուկ իրավունքից զրկում.»:

Հոդված 2. Օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «Առարկաները» բառը փոխարինել «Տուգանային միավորը, առարկաները» բառերով:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 25.1-ին հոդվածով.

«**Հոդված 25.1. Տուգանային միավորը**

1. Տուգանային միավորները կիրառվում են ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ կատարած անձանց նկատմամբ՝ սույն օրենսգրքի հատուկ մասով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

2. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձին Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վարորդական վկայական ստանալու օրվանից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետը ավարտվելու օրվանից) մեկ տարի ժամկետով տրվում է 9 միավոր: Այլ պետությունում ստացած վարորդական վկայական ունեցող և բնակչության պետական ռեգիստրում հաշվառված օտարերկրացուն միավորները տրվում են բնակչության պետական ռեգիստրում հաշվառվելու օրվանից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետը ավարտվելու օրվանից): Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձին յուրաքանչյուր ***հաջորդ մեկ*** տարի ***ժամանակահատվածի համար*** տրվում է 9 միավոր, և նախորդ տարվա միավորների մնացորդը չի փոխանցվում հաջորդ տարի:

3. Ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտում ամրագրելու դեպքում վարչական իրավախախտում կատարած անձին

տվյալ տարում ***(մեկ տարի ժամանակահատվածում)*** տրված ընդհանուր միավորներից ինքնաշխատ եղանակով հանվում են սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված իրավախախտման համար սահմանված տուգանային միավորները:

4. Տուգանային միավոր նախատեսող վարչական տույժ նշանակելու մասին որոշման գանգատարկումը չի կարող կանխել դրա իրավական հետևանքների վրա հասնելը տվյալ տարում կատարված և սույն օրենսգրքի 129.3-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների համար, եթե վարչական տույժ նշանակելու մասին որոշումը, գանգատի քննության արդյունքում, ուժի մեջ է մտել հաջորդող տարվա ընթացքում:

~~4~~ 5. Այն դեպքում, եթե սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված իրավախախտման համար հանվող միավորները գերազանցում են անձին տրված միավորների մնացորդը, ապա տուգանային միավորները հանվում են այդ մնացորդի չափով՝ անկախ տվյալ իրավախախտման համար սահմանված տուգանային միավորների չափից:

~~5~~ 6. Սույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար որպես վարչական պատասխանատվության միջոց կիրառվում է ~~0,5~~ 0.5, 1, 2, 3 կամ 4 տուգանային միավոր: ~~Տուգանային միավորի չափը սահմանվում է ելնելով վարչական իրավախախտման հանրային վնասակարության աստիճանից, քանակից, զոհերով և վիրավորներով ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառ կամ նպաստող պայման հանդիսանալու հանգամանքից:~~»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 28.1-ին հոդվածով.

«**Հոդված 28.1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցումը**

1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցումը կարող է նշանակվել 1 ամսից մինչև 6 ամիս ժամկետով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 29. Հատուկ իրավունքից զրկումը**

1. Հատուկ իրավունքից զրկումը անձին տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից կամ որսորդության իրավունքից ժամանակավոր զրկելն է:

2. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից կամ որսորդության իրավունքից զրկումը կարող է նշանակվել 1 ամսից մինչև 3 տարի ժամկետով:

3. Որսորդության իրավունքից զրկում չի կարող նշանակվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությունը ապրուստի հիմնական աղբյուրն է:»:

Հոդված 6. Օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) ~~«սեփականատերը» բառից հետո լրացնել «(լիզինգառուն)» բառը, «սեփականություն» բառից հետո՝ «կամ լիզինգի առարկա» բառերը, իսկ «անհատ ձեռնարկատերը» բառերից հետո՝ «կամ օրենքով նախատեսված կարգով տրանսպորտային միջոցի շահագործող հանդիսացող անձը» բառերը~~ ***«, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը» բառերը փոխարինել «(լիզինգառուն) (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը) կամ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքով նախատեսված՝ տրանսպորտային միջոցի շահագործող հանդիսացող անձը» բառերով***,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասություն. «Տուգանային միավորների ձևով նշանակվող վարչական տույժը կիրառվում է սույն մասում նշված անձանց նկատմամբ, եթե նրանք ունեն տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք:»:

Հոդված 7. Օրենսգրքի 35-րդ հոդվածի երկրորդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~7~~ 8. Օրենսգրքի 123-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

2) 3-րդ մասի սանկցիայում «քառասնապատիկի» բառը փոխարինել «քսանապատիկի» բառով,

3) 4-րդ մասի սանկցիայում «երեսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով,

4) 6-րդ մասում «կամ 4-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառով:

Հոդված ~~8~~ 9. Օրենսգրքի 123.1-ին հոդվածի 2-րդ մասի սանկցիայում «տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ ~~8 ամսից~~ 1 տարի ժամկետով» բառերով:

Հոդված ~~9~~ 10. Օրենսգրքի 123.3-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում «հնգապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով***, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերը***:

Հոդված ~~10~~ 11. Օրենսգրքի 123.5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «տասնապատիկի» բառը փոխարինել «հնգապատիկի» բառով, ***իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր» բառերը,***

2) լրացնել 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի առնվազն մեկ նիշը ~~դիտավորությամբ~~ փակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:»,

3) 4-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ ~~10 ամսից~~ 1 տարի ժամկետով:»,

4) 4.1-ին և 4.2-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել,

5) 5-րդ մասում «հարյուրապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր» բառերը,

6) 7-րդ մասում «հարյուրապատիկի» բառը փոխարինել «քսանիննապատիկի» բառով,

7) 10-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ ~~10 ամսից~~ 1 տարի ժամկետով:»,

8) 11-րդ մասը «այլ պատճառներով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ ~~դիտավորությամբ~~ ***առնվազն մեկ նիշը*** փակելու դեպքերի,» բառերով:

Հոդված ~~11~~ 12. Օրենսգրքի 123.6-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով:

Հոդված ~~12~~ 13. Օրենսգրքի 124-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

2) 5-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

3) 6-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

4) 8-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

5) 9-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

6) 11-րդ մասի սանկցիայում «հնգապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով, ***իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերը,***

7) 13-րդ մասի սանկցիայում «տասնապատիկի» բառը փոխարինել «հնգապատիկի» բառով,

8) 14-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ ~~2 միավոր~~ ***3 միավոր***» բառերով,

9) 17-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր» բառերով,

10) 18-րդ մասի սանկցիայում «երեսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ ~~2 միավոր~~ ***3 միավոր***» բառերը,

11) 21-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ ~~0,5~~ 0.5 միավոր» բառերով,

12) 22-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ ~~0,5~~ 0.5 միավոր» բառերով,

13) 23-րդ մասի դիսպոզիցիան «տարածք» բառից հետո լրացնել «կամ «Հաշմանդամներ» ճանապարհային նշանով (ցուցանակով) կահավորված վայրում «Հաշմանդամ» ճանաչման նշանով չկահավորված տրանսպորտային միջոցը կանգնեցնելը» բառերով, իսկ սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ ~~0,5~~ 0.5 միավոր» բառերով,

14) 26-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով,

15) 28-րդ մասի սանկցիայում «յոթնապատիկի» բառը փոխարինել «հնգապատիկի» բառով,

16) 31-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ ~~10 ամսից~~ 1 տարի ժամկետով:»,

17) 32-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

18) 35-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35. Տրանսպորտային միջոցների համընթաց հոսքերն իրարից բաժանող «հոծ գիծ» գծանշման պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի առջևի երկու անիվներն ամբողջությամբ չեն հատել գծանշումը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:»,

19) 37-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«37. «Կանգ-գիծ» գծանշման պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող գծանշումների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի անիվներից ոչ մեկն ամբողջությամբ չի հատել գծանշումը և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:»:

Հոդված ~~13~~ 14. Օրենսգրքի 124.2-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում «երեսնապատիկի» բառը փոխարինել «քսանապատիկի» բառով:

Հոդված ~~14~~ 15. Օրենսգրքի 124.3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր» բառերը,

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~15~~ 16. Օրենսգրքի 124.4-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:»,

2) 3-րդ մասի սանկցիայում «հարյուրապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր» բառերը,

3) 4-րդ մասի սանկցիայում «երկուհարյուրապատիկի» բառը փոխարինել «քսաննինապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 4 միավոր» բառերը,

4) 5-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ ~~10 ամսից~~ 1 տարի ժամկետով:»:

Հոդված ~~16~~ 17. Օրենսգրքի 124.6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր» բառերով,

2) 3-րդ մասի սանկցիայում «երեսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով:

Հոդված ~~17~~ 18. Օրենսգրքի 126-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. դիսպոզիցիայում «վեցերորդ» բառը փոխարինել «հինգերորդ» բառով,

բ. սանկցիայում «հարյուրհիսնապատիկի» բառը փոխարինել «քսաննինապատիկի» բառով, իսկ «չափով» բառից հետո լրացնել «, տուգանային միավորի կիրառում՝ 4 միավոր» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մասով.

«1.1. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցը կամ թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլը ոչ սթափ վիճակում վարելը, եթե վարորդը միայն ալկոհոլի ազդեցության տակ է, և զանցանքը չի պարունակում սույն հոդվածի երկրորդից չորրորդ մասերի հատկանիշները՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 6 ամիս ժամկետով:»,

3) 2-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով:»,

4) 3-րդ մասի սանկցիայում «մեկ» բառը փոխարինել «2» թվով,

5) 4-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 2 տարի ժամկետով:»,

6) 5-րդ մասի դիսպոզիցիայից հանել «, երկրորդ կամ չորրորդ» բառերը, ~~իսկ սանկցիայում «մեկ տարի» բառերը փոխարինել «6 ամիս» բառերով,~~

7) 6-րդ և 7-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել~~։~~,

8) 9-րդ մասում «0.4 գրամից» բառերը փոխարինել «0.2 գրամից» բառերով, իսկ «0.2 միլիգրամից» բառերը՝ «0.1 միլիգրամից» բառերով:

Հոդված ~~18~~ 19. Օրենսգրքի 128-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված» բառերը,

2) 1-ին մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով:

Հոդված ~~19~~ 20. Օրենսգրքի 129.2-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ներկայացնելու տրանսպորտային միջոցը հաշվառելը կամ» բառերը,

2) 3-րդ մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԱՊՊԱ պայմանագիր չունեցող տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրելը, եթե ԱՊՊԱ պայմանագիր ունենալը տրանսպորտային միջոցը վարելու միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրելու՝ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր պայման է՝»:

Հոդված ~~20~~ 21. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 129.3-րդ հոդվածով.

«**Հոդված 129.3.** ***Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ~~ճ~~Ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը~~, որոնց համար նախատեսված է վարչական տույժ տուգանային միավորի ձևով***

~~1. Ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը, որոնց համար նախատեսված է վարչական տույժ տուգանային միավորի ձևով՝~~

1. Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը, այսինքն՝ սույն օրենսգրքի 123.3 հոդվածի 1-ին, 123.5 հոդվածի 1-ին, 1.1-ին, 5-րդ, 124 հոդվածի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ, 18-րդ, 21-23-րդ, 26-րդ, 124.3 հոդվածի 1-ին, 124.4 հոդվածի 2-4-րդ, 124.6 հոդվածի 1-ին, 126 հոդվածի 1-ին, 135.2 հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված արարք կատարելը, եթե այդ իրավախախտման համար նախատեսված տուգանային միավորի և տվյալ տարում վարորդի նկատմամբ կիրառված տուգանային միավորների հանրագումարը կազմում է 9 կամ ավելի միավոր՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցում՝ 6 ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ 1 տարի ժամկետով:

~~3. Ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) պարբերաբար խախտում է համարվում 1 տարվա ընթացքում 3 և ավելի անգամ իրավախախտումներ կատարելը, որոնց համար կիրառված տուգանային միավորների հանրագումարը կազմում է 9 տուգանային միավոր:~~»:

Հոդված ~~21~~ 22. Օրենսգրքի 131-րդ հոդվածի 7-րդ մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով:

Հոդված ~~22~~ 23. Օրենսգրքի 132-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

2) 2-րդ մասի սանկցիայում «հարյուրապատիկի» բառը փոխարինել «քսանիննապատիկի» բառով,

3) 3-րդ մասի սանկցիայում «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանիննապատիկի» բառով,

4) 4-րդ մասի դիսպոզիցիան «իրավունք չունեցող» բառերից հետո լրացնել «, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ այդ իրավունքից զրկված» բառերով, իսկ սանկցիայում «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանիննապատիկի» բառով,

5) 5-րդ և 6-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~23~~ 24. Օրենսգրքի 135.2-րդ հոդված~~ի~~ում՝

1) 1-ին մասի սանկցիայում «եռապատիկի» բառը փոխարինել «յոթնապատիկի» բառով***, իսկ «չափով» բառից հետո լրացնել «տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերը,***

2) 2-րդ մասի սանկցիան «չափով» բառից հետո լրացնել «, իսկ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ՝ նաև տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր» բառերով:

Հոդված ~~24~~ 25. Օրենսգրքի 140-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «երեսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով,

2) 2-րդ մասի սանկցիայում «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով,

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

4) 4-րդ մասի սանկցիայում «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով,

5) 5-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով՝ սահմանափակող իրերի և առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

Հոդված ~~25~~ 26. Օրենսգրքի 224-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «129.2,» թվից հետո լրացնել «129.3,» թվով,

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով սահմանված պաշտոնատար անձինք:»:

Հոդված 27. Օրենսգրքի 255-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Արձանագրությունը թվային եղանակով կազմելու դեպքում իրավախախտում կատարած անձի ստորագրությունը ստացվում է թվային եղանակով, իսկ նրա՝ բացատրություն տալու և դիտողություններ անելու իրավունքի իրացման փաստը և բովանդակությունն ամրագրվում են տեսաձայնագրման միջոցով:»:

Հոդված 28. Օրենսգրքի 264-րդ հոդվածի չորրորդ մասի առաջին և երկրորդ նախադասությունները հանել:

Հոդված ~~26~~ 29. Օրենսգրքի 283-րդ հոդվածում՝

1) երկրորդ մասի ***առաջին պարբերությունում «երեք օրվա» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա» բառերով, իսկ*** 1-ին կետում «կամ հասցեատերը որոշումն ստանալու անդորրագրի վրա ստորագրել է որոշումն ստանալուց հրաժարվելու մասին» բառերը փոխարինել «կամ հասցեատերը հրաժարվել է որոշումն ստանալուց, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին» բառերով,

2) երրորդ մասի երկրորդ նախադասության «և ստորագրել հրաժարվելու մասին» բառերը փոխարինել «, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին» բառերով:

Հոդված 30. Օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասը «129.2-րդ,» թվից հետո լրացնել «129.3-րդ,» թվով:

Հոդված ~~27~~ 31. Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասում «և 31 ~~հոդվածներով~~» բառերը փոխարինել ~~«հոդվածով» բառով~~ ***«, 28.1 և 29» բառերով***:

Հոդված 32. Օրենսգրքի 291-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~28~~ 33. Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասը «129.2,» թվից հետո լրացնել «129.3» թվով:

Հոդված ~~29~~ 34. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 25.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 25.1

ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 303.1. Տուգանային միավոր կիրառելու մասին որոշումը կատարելու կարգը

1. Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նշանակելու մասին որոշումն ի կատար են ածում սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ոստիկանության պաշտոնատար անձինք՝ վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանում տուգանային միավորների չափի մասին տեղեկատվությունը մուտքագրելու միջոցով:

~~2. Տուգանային միավորի ձևով վարչական տույժ նշանակելու մասին որոշման մեջ պարտադիր նշվում է անձին տվյալ տարում տրված միավորների մնացորդի չափը:~~

Հոդված 303.2. Տվյալ տարում տրված միավորները մասնակիորեն վերականգնելը

1. Տվյալ տարում տրված միավորների մնացորդը 3 և պակաս լինելու դեպքում անձն իր ցանկությամբ կարող է հանձնել վարորդական վկայական ստանալու տեսական քննություն:

2. Տեսական քննությունը դրական հանձնելու դեպքում տվյալ տարում նվազեցված միավորներից վերականգնվում է 2 միավոր:

3. Միավորները վերականգնելու նպատակով անձը կարող է քննություն հանձնել տվյալ տարում միայն մեկ անգամ:»:

Հոդված ~~30~~ 35. Օրենսգրքի 305-րդ հոդվածում՝

1) երկրորդ մասում «224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 111, 123, 123.1, 123.3, 123.4, 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերի), 123.6, 123.7, 124, 124.1, 124.2, 124.3, 124.4, 124.6, 125, 126, 128, 129.2, 131, 132, 135.2, 140-րդ» բառերով,

2) 9-րդ և 10-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~31~~ 36. Օրենսգրքի 307-րդ հոդվածի երրորդ մասում «224 հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում նշված» բառերը փոխարինել «43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 111, 123, 123.1, 123.3, 123.4, 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերի), 123.6, 123.7, 124, 124.1, 124.2, 124.3, 124.4, 124.6, 125, 126, 128, 129.2, 131, 132, 135.2, 140-րդ» բառերով:

Հոդված ~~32~~ 37. Օրենսգրքի 29-րդ գլխի վերնագիրը «ԶՐԿԵԼՈՒ» բառից հետո լրացնել «, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ» բառերով:

Հոդված ~~33~~ 38. Օրենսգրքի 314-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «զրկելու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերով,

2) 1-ին մասը «զրկելու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերով, իսկ «կետում» բառը փոխարինել «մասում» բառով:

Հոդված ~~34~~ 39. Օրենսգրքի 315-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «զրկելու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերով,

2) առաջին մասի «Տրանսպորտային միջոցներ կամ փոքրաչափս» բառերը փոխարինել «Փոքրաչափս» բառով, իսկ «վարորդը կամ» և «տրանսպորտային միջոցներ կամ» բառերը հանել,

3) երկրորդ մասի «վարորդը կամ», «տրանսպորտային միջոցներ կամ» և «տրանսպորտային միջոցների կամ» բառերը հանել,

4) երրորդ մասի «վարորդը կամ» և «համապատասխանաբար ոստիկանության և» բառերը հանել,

5) չորրորդ մասի «Տրանսպորտային միջոցներ կամ փոքրաչափս» բառերը փոխարինել «Փոքրաչափս» բառով, իսկ «համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը և» բառերը հանել,

~~2~~ 6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու ***և տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու*** մասին որոշումն***երն*** ի կատար է ***են*** ածվում վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանում կասեցման ***և զրկման*** մասին տեղեկատվությունը մուտքագրելու միջոցով:»:

Հոդված ~~35~~ 40. Օրենսգրքի 317-րդ հոդվածում՝

1) վերնագրում «Հատուկ իրավունքից զրկելու» բառերը փոխարինել «Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերով,

2) առաջին մասն ուժը կորցրած ճանաչել,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման ժամկետի առնվազն կեսն անցնելուց հետո անձն իր ցանկությամբ կարող է հանձնել վարորդական վկայական ստանալու տեսական քննություն: Տեսական քննությունը դրական հանձնելու դեպքում անձի՝ տրանսպորտային միջոցներ վարելու կասեցված իրավունքը վերականգնվում է:»:

Հոդված ~~36~~ 41. Օրենսգրքի 318-րդ ~~հոդվածում՝~~ ***հոդվածն ուժը կորցրած ճանաչել:***

~~1) վերնագիրը «զրկելու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերով,~~

~~2) 1-ին մասը «զրկված» բառից հետո լրացնել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված» բառերով, իսկ «զրկելու» բառից հետո՝ «կամ կասեցնելու» բառերով,~~

~~3) 2-րդ մասը «զրկելու» բառից հետո լրացնել «կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու» բառերով:~~

Հոդված ~~37~~ 42. *Եզրափակիչ մաս և ~~Ա~~ա*նցումային դրույթներ

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 6 ամիս հետո, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետի, 10-րդ հոդվածի 2-րդ կետի (բացառությամբ տուգանային միավորի կիրառման), 12-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի, 25-րդ հոդվածի 2-րդ կետի և 26-րդ հոդվածի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին կետի «բ» պարբերության, 28-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի 1-5-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2020 թվականի սեպտեմբերի 1-ից: Մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը սույն օրենքով նախատեսված տուգանային միավորը, որպես վարչական տույժ, կիրառվում է միայն «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով քննության ենթակա գործերով:

2. Սույն օրենքը հետադարձ ուժ չունի:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձանց սույն օրենքի 3-րդ հոդվածով

նախատեսված 9 միավորը տրվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրը՝ մեկ տարի ժամկետով:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ կողմից 2019թ. սեպտեմբերի 11-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից օրինագծերի վերաբերյալ ներ

կայացված առաջարկների

հ/հ	***Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը***	***Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկը***	***Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)***	***Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը***	***Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը***
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ					
1	ՀՀ ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյան	Հոդված 21 (նոր խմբագրությամբ՝ հոդված 22)	Նախագծի հոդված 21-ը (նոր խմբ.՝ 22) խմբագրել հետևյալ պարբերությամբ՝ օրենսգրքի 131-րդ հոդվածի 4-րդ կետի «տրանսպորտային միջոցի ուղևորի կողմից ընթացքի ժամանակ տրանսպորտային միջոցի դռները բացելը կամ կանգնած տրանսպորտային միջոցի դռները բացելը, եթե դա խոչընդոտում է երթևեկության մյուս մասնակիցներին, ինչպես նաև ուղևորների կողմից տրանսպորտային միջոցից իրեր և առարկաներ նետելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, *և տուգանային միավորի*	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 131-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավախախտումների սուբյեկտ է հանդիսանում ուղևորը, իսկ վերջինս վարորդական վկայական ունենալու պարտականություն չունի, հետևաբար նրա	Չի ընդունվել

			կիրառում՝ 1 միավոր» բառերով:	նկատմամբ տուգանային միավորի ձևով վարչական տույժ կիրառել հնարավոր չէ:	
2	ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Հոդված 10 (նոր խմբ.՝ 11), մաս 1	Օրենսգրքի 123.5-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել 0.5 տուգանային միավոր:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է
3	ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Հոդված 12 (նոր խմբ.՝ 13), մաս 1, 2, 3, 4, 5, 14	Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ և 26-րդ մասերով սահմանված տուգանային միավորները զրոյացնել՝ զուգահեռաբար կիրառելով 124.6 հոդվածի 1-ին մասի դրույթները:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ նշված իրավախախտումների դեպքում միշտ չէ, որ առաջանում է վթարային իրադրություն, սակայն դրանք ինքնին վտանգավոր են, իրենց բնույթով հանդիսանում են ՃՏՊ-ների (զոհերով և վիրավորներով ուղեկցվող) առաջացման հիմնական պատճառներից: Միայն վթարային իրադրություն առաջանալու պարագայում տուգանային միավոր կիրառելու դեպքում նախագծի հիմնական՝ ՃՏՊ-ների նախականխման նպատակին հասնել հնարավոր չէ: Բացի այդ, վթարային իրադրությունից մինչև	Չի ընդունվել

				ճանապարհատրանսպորտայ ին պատահարի առաջացում կարող է լինել ընդամենը մեկ ակնթարթի տարբերություն, և շատ դեպքերում դրա կանխատեսումն ու կանխումը վարորդի կողմից անհնար է և կախված չէ վերջինիս գործողություններից:	
4	ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Հոդված 12 (նոր խմբ.՝ 13), մաս 11	Նույն (124-րդ) հոդվածի 21-րդ մասում առաջարկում ենք չսահմանել տուգանային միավոր:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ հիմնականում նշված իրավախախտումների հետևանքով են առաջանում խցանումները, որոնք իրենց հերթին հաճախ հանգեցնում են մյուս տրանսպորտային միջոցների վարորդների կողմից այլ իրավախախտումների կատարմանը: Բացի այդ, նշված իրավախախտումների համար տուգանային միավորի նախատեսումն առաջարկվել էր վարորդների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից	Չի ընդունվել

				նախագծի հանրային քննարկումների ընթացքում: Միաժամանակ, նախագիծը ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստում քննարկելիս նույնիսկ առաջարկվել էր կանգառի և կայանման կանոնների հետ կապված իրավախախտումների համար 0.5 միավորի փոխարեն սահմանել 1-ը, սակայն, հաշվի առնելով նշված խախտումների տարած-վածությունը, առայժմ որոշվել է տուգանային միավորի չափը թողնել անփոփոխ:	
5	ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Հոդված 12 (նոր խմբ.՝ 13), մաս 12	Նույն (124-րդ) հոդվածի 22-րդ մասն առաջարկում ենք խմբագրել՝ սահմանելով, որ տուգանային միավորը հանվում է այն դեպքում, երբ վարորդները կայանած մեքենան շրջանցելու համար ստիպված են եղել երթևեկել հանդիպակաց գոտով:	Առաջարկությունը չի ընդունվել: Տե՛ս՝ սույն ամփոփաթերթի 4-րդ առաջարկության հիմնավորումը:	Չի ընդունվել
6	ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Հոդված 14 (նոր խմբ.՝ 15), մաս 1	Օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «, որի արդյունքում ստեղծվել է վթարային իրավիճակ» բառերով: Նույն մասում տուգանքը թողնել նույնը, տուգանային միավորը դարձնել 1:	Առաջարկությունը չի ընդունվել: Տե՛ս՝ սույն ամփոփաթերթի 3-րդ առաջարկության հիմնավորումը:	Չի ընդունվել

7	ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Հոդված 15 (նոր խմբ.՝ 16), մաս 1	Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել այնպես, որ 11-20 կմ/ժ արագության սահմանազանցման դեպքում տուգանքը մնա գործող դրույքաչափով և միավոր չհանվի, 21-30 կմ/ժ արագության գերազանցման դեպքում՝ սահմանել 20.000 ՀՀ դրամ տուգանք և 1 միավոր:	Առաջարկությունը չի ընդունվել: Բնակավայրերում ճանապարհների առանձին հատվածներում կարող է սահմանվել ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված առավելագույն արագությունից բարձր արագություն՝ մինչև 80 կմ/ժ (օրինակ՝ Արշակունյաց պող.՝ 70կմ/ժ, Իսակովի պող.՝ 80կմ/ժ), իսկ բնակավայրերից դուրս մինչև 110 կմ/ժ: Բնակավայրում սահմանված առավելագույն արագությունը նույնիսկ 11-20 կմ/ժ-ով գերազանցելու դեպքում (գումարած 10 կմ/ժ՝ արագաչափ սարքի հնարավոր սխալանքը), հատկապես նշված դեպքերում կտրուկ բարձրանում է իրավախախտման հանրային վնասակարության աստիճանը և բացասական հետևանքների առաջացման	Չի ընդունվել

				հնարավորությունը: Բացի այդ, արագության գերազանցումը ՃՏՊ-ների առաջացման պատճառների շարքում առաջինն է, դրա հետևանքով առաջացած ՃՏՊ-ներն էլ իրենց հերթին զոհերի և վիրավորների թվով առաջին տեղում են, իսկ արագությունը 11-30 կմ/ժ-ով գերազանցելը կազմում է տարեկան արձանագրված բոլոր իրավախախտումների շուրջ 7%-ը, ինչը բավականին մեծ թիվ է: Հետևաբար, տվյալ միջակայքի համար տուգանային միավորի նախատեսումն ուղղված է նշված իրավախախտումը կանխելուն և դրա բացասական հետևանքները նվազեցնելուն, իսկ տուգանային միավորի չափն ընտրվել է նույն հոդվածի այլ մասերով նախատեսված իրավախախտումների համար սահմանված միավորների չափի հաշվառմամբ՝ ըստ արաքի վնասակարության աստիճանի՝ համամասնորեն:	

8	ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Հոդված 24 (նոր խմբ.՝ 25), մաս 2, 4, 5	Օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերում գործող տուգանքները ոչ թե նվազեցնել, այլ եռապատկել՝ ելնելով տվյալ արարքների հանրային վտանգավորության աստիճանից:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ չի բխում նախագծով որդեգրված տուգանային քաղաքականության ընդհանուր սկզբունքից: Միաժամանակ, նշված իրավախախտումները բավականին հազվադեպ են, այսպես՝ 2018թ. տվյալներով 140-րդ հոդվածի 2-րդ մասով արձանագրվել է 18, 4-րդով՝ 2, իսկ 5-րդով՝ 12 իրավախախտում, որոնք ընդհանուր իրավախախտումների թվում կազմում են համապատասխանաբար 0.001%, 0.0001% և 0.0007%:	Չի ընդունվել
9	ՀՀ կառավարություն	Հոդված 3	Առաջարկվում է լրացվող 25.1 հոդվածի 2-րդ մասի երրորդ նախադասությունում հստակեցնել «յուրաքանչյուր տարի» հասկացությունը՝ տարընկալումներից խուսափելու նպատակով, որպեսզի պարզ լինի, որ խոսքը գնում է ոչ թե այս կամ այն օրացուցային տարվա, այլ յուրաքանչյուր վարորդի համար հաշվարկվող մեկ տարի ժամանակահատվածի մասին:	Առաջարկությունն ընդունվել է, հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը խմբագրվել են:	Ընդունվել է
10	ՀՀ կառավարություն	Հոդված 3	Առաջարկվում է 25.1 հոդվածում ամրագրել, որ բողոքարկման արդյունքում տուգանային	Առաջարկությունն ընդունվել է: Լրացվող 25.1 հոդվածը	Ընդունվել է

			միավորը նվազեցվելու է տվյալ տարվա միավորներից, որում կատարվել է իրավախախտումը, որպեսզի վարորդների կողմից չչարաշահվի բողոքարկման ինստիտուտը՝ տուգանային միավորի կիրառման անցանկալի հետևանքներից (կասեցման և զրկման ձևով) արհեստականորեն խուսափելու նպատակով: Հաշվի առնելով, որ վարչական դատարանի ծանրաբեռնվածության պատճառով գործերը քննվում են շուրջ 1 տարի և ավելի, ուստի առաջարկվում է հստակ սահմանել, որ տուգանային միավորի ձևով վարչական տույժ նշանակելու վերաբերյալ վարչական ակտը բողոքարկելու դեպքում դրանով նախատեսված հետևանքները վրա են հասնելու իրավախախտումը կատարելու տարում տրված միավորների շրջանակներում՝ անկախ բողոքարկման վարույթի ավարտի ժամկետից: Այսինքն՝ վրա է հասնելու նաև օրենսգրքի 129.3-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների համար կասեցման և զրկման ձևով նախատեսված հետևանքը, նույնիսկ եթե վարչական տույժ նշանակելու մասին որոշումը բողոքի քննության արդյունքում ուժի մեջ մտնի իրավախախտման կատարմանը հաջորդող տարիների ընթացքում:	լրացվել է նոր 4-րդ մասով:	
11	ՀՀ կառավարություն	Հոդված 3	Առաջարկվում է լրացվող 25.1 հոդվածի 5-րդ մասի (նոր խմբ.՝ 6-րդ մաս) 2-րդ նախադասությունը հանել, քանի որ նշված դրույթում ամրագրված տեղեկություններն	Առաջարկությունն ընդունվել է, նախադասությունը հանվել է:	Ընդունվել է

			օրենքում արտացոլվել չեն կարող, ուստի դրանք կարող են կիրառվել միայն որպես նոր տուգանային միավորներ նախատեսելու կամ փոփոխելու հիմնավորումներ՝ հետագայում ներկայացվելիք օրենսդրական նախաձեռնությունների շրջանակներում:		
12	ՀՀ կառավարություն	Հոդված 6, կետ 1	Տարընկալումներից խուսափելու նպատակով առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածի 1-ին կետը (Օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ) շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) «, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը» բառերը փոխարինել «(լիզինգառուն) (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը) կամ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքով նախատեսված՝ տրանսպորտային միջոցի շահագործող հանդիսացող անձը» բառերով,»:	Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին կետը խմբագրվել է:	Ընդունվել է
13	ՀՀ կառավարություն	Նոր խմբ.՝ հոդված 7	Առաջարկվում է Օրենսգրքի 35-րդ հոդվածից հանել վարչական տույժերը կլանելու վերաբերյալ իրավակարգավորումը, քանի որ տուգանային միավորի ձևով կիրառվող	Առաջարկությունն ընդունվել է, նախագիծը լրացվել է նոր 7-րդ հոդվածով:	Ընդունվել է

			տույժերի պարագայում այն իմաստազրկում է ամբողջ համակարգի գոյությունը: Բացի այդ, «կլանման» ինստիտուտը քրեական օրենսդրությունից արհեստականորեն վերցված ինստիտուտ է, որը տուգանային սանկցիաների գերիշխման պարագայում լիովին անիմաստ է:		
14	ՀՀ կառավարություն	Հոդված 8 (նոր խմբ.՝ 9), Հոդված 10 (նոր խմբ.՝ 11), կետ 3 և 7, Հոդված 12 (նոր խմբ.՝ 13), կետ 16, Հոդված 15 (նոր խմբ.՝ 16), կետ 4	Առաջարկվում է օրենսգրքի 123.1 հոդվածի 2-րդ, 123.5 հոդվածի 4-րդ և 10-րդ, 124 հոդվածի 31-րդ և 124.4 հոդվածի 5-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար նախատեսել բացարձակ որոշակի սանկցիաներ՝ կոռուպցիոն ռիսկերից խուսափելու նպատակով, միաժամանակ, պարզ չէ, թե տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի միջոցով ամրագրված խախտումների պարագայում ինչպես է որոշվելու տույժի չափը:	Առաջարկությունն ընդունվել է, սանկցիաները խմբագրվել են:	Ընդունվել է
15	ՀՀ կառավարություն	Հոդված 9 (նոր խմբ.՝ 10), Հոդված 12 (նոր խմբ.՝ 13), կետ 6, Հոդված 23 (նոր խմբ.՝ 24)	Առաջարկվում է Օրենսգրքի 123.3 հոդվածի 1-ին մասով, 124 հոդվածի 11-րդ մասով և 135.2 հոդվածով նախատեսված իրավախախտումների *(համապատասխանաբար՝ օրենքով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցներ վարելու, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց*	Առաջարկությունն ընդունվել է, նախագծի համապատասխան հոդվածները խմբագրվել են:	Ընդունվել է

			սաղավարտի ուղևոր փոխադրելու, տրանսպորտային միջոցների վարորդների կողմից թեկուզ մեկ ձեռքի օգտագործմամբ ընթացքի ժամանակ ռադիոկապից և (կամ) հեռախոսակապից օգտվելու, տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցի ընթացքի ժամանակ ծխելու, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներում կամ թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլներում ծխելու) համար որպես վարչական տույժ նախատեսել նաև 1 տուգանային միավորի կիրառում:		
16	ՀՀ կառավարություն	Հոդված 10 (նոր խմբ.՝ 11), կետ 2 և 8	Օրենսգրքի 123.5 հոդվածում լրացվող 1.1 մասից առաջարկվում է հանել «դիտավորությամբ» բառը, քանի որ նախատեսված իրավախախտումը, միևնույն է, կարող է կատարվել միայն դիտավորությամբ, բացի այդ, հաշվի առնելով, որ նշված հոդվածում մեղքի ձևի մասին նշում չկա նաև այլ դիտավորյալ իրավախախտումների համար, ուստի օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսանկյունից անհրաժեշտ է ցուցաբերել միատեսակ մոտեցում նորմը շարադրելիս: Միաժամանակ, նույն հոդվածի 11-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել, որ խոսքը գնում է առնվազն մեկ նիշը փակելու մասին:	Առաջարկությունն ընդունվել է, դրույթները խմբագրվել են:	Ընդունվել է
17	ՀՀ կառավարություն	Հոդված 12 (նոր խմբ.՝ 13), կետ 8, 10	Առաջարկվում է օրենսգրքի 124 հոդվածի 18-րդ մասով նախատեսված իրավախախտման (հանդիպակաց երթևեկության գոտի դուրս	Առաջարկությունն ընդունվել է, դրույթները խմբագրվել են:	Ընդունվել է

			գալու) համար սահմանել 3 տուգանային միավոր՝ նախագծով նախատեսված 2-ի փոխարեն՝ հաշվի առնելով արարքի հանրային վնասակարության աստիճանը: Առաջարկությունը վերաբերում է նաև օրենսգրքի 124-րդ հոդվածի 14-րդ մասով նախատեսված իրավախախտմանը, քանի որ վտանգավորության տեսանկյունից դրանք նույնանում են (տրանսպորտային միջոցը միակողմանի երթևեկությամբ ճանապարհով տրանսպորտային միջոցների հոսքին հակառակ ուղղությամբ (այդ թվում՝ հետընթաց) վարելը):		
18	ՀՀ կառավարություն	Հոդված 17 (նոր խմբ.՝ 18), կետ 6	Առաջարկվում է 126-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ 1 տարվա ընթացքում կրկին ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու համար գործող օրենսգրքով նախատեսված սանկցիան թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով արարքի հանրային վնասակարության աստիճանը:	Առաջարկությունն ընդունվել է, դրույթը խմբագրվել է, սանկցիան թողնվել է անփոփոխ:	Ընդունվել է
19	ՀՀ կառավարություն	Հոդված 17 (նոր խմբ.՝ 18), կետ 8	Առաջարկվում է վերանայել և խստացնել օրենսգրքի 126-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ ոչ սթափ վիճակի որոշման չափանիշները՝ հաշվի առնելով միջազգային փորձը: Մասնավորապես, մի շարք երկրներում (օր.՝ Լեհաստան, Ուկրաինա, Էստոնիա, Նորվեգիա, Շվեդիա, Չինաստան) արյան մեջ ալկոհոլի թույլատրելի պարունակությունը սահմանված է 0,2 պրոմիլ, իսկ այլ պետություններում 0-ից բարձր ցանկացած	Առաջարկությունն ընդունվել է, դրույթը խմբագրվել է, ոչ սթափ վիճակի որոշման շեմն իջեցվել է:	Ընդունվել է

			չափն արդեն պատժելի է համարվում (Վրաստան, Չեխիա, Սլովակիա, Ռումինիա, Հունգարիա, Մոլդովա, Տաջիկստան, Ուզբեկստան, Վիետնամ, Ուրուգվայ, Պարագվայ, Բրազիլիա և այլն):		
20	ՀՀ կառավարություն	Հոդված 20 (նոր խմբ.՝ 21)	Առաջարկվում է խմբագրել լրացվող 129.3 հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան՝ հղում կատարելով կոնկրետ իրավախախտումները սահմանող հոդվածներին, որոնցով նախատեսված արաքների կատարումը հանգեցնելու է վարելու իրավունքի կասեցման:	Առաջարկությունն ընդունվել է, հոդվածը խմբագրվել է, միաժամանակ 3-րդ մասով նախատեսված պարզաբանումը ներառվել է 1-ին մասի դիսպոզիցիայում:	Ընդունվել է
21	ՀՀ կառավարություն	Նոր խմբ.՝ հոդված 27	Օրենսգրքի 255-րդ հոդվածում առաջարկվում է նախատեսել նաև թվային եղանակով արձանագրություն կազմելու հնարավորությունն ու դրա առանձնահատկությունները՝ հաշվի առնելով, որ ոստիկանությունն արդեն ապահովել է նման տեխնիկական հնարարվորությունը:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացում: Նախագծում լրացվել է նոր 27-րդ հոդված:	Ընդունվել է
22	ՀՀ կառավարություն	Նոր խմբ.՝ հոդված 28, Հոդված 34 (նոր խմբ.՝ 38)	Առաջարկվում է վերանայել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու ընթացակարգը, մասնավորապես հանել վարորդական վկայականը վերցնելու վերաբերյալ դրույթները, քանի որ ներկայիս տեխնիկական լուծումների պայմաններում որոշումը հնարավոր է ի կատար ածել զրկելու վերաբերյալ տեղեկությունները համապատասխան տեղեկատվական շտեմարան մուտքագրելու միջոցով:	Առաջարկությունն ընդունվել է, օրենսգրքի 264 և 315 հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

23	ՀՀ կառավարություն	Հոդված 26 (նոր խմբ.՝ 29), կետ 1	Օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվում է որոշման պատճենը հանձնելու ժամկետը հաշվարկել աշխատանքային օրերով, որն առավել ողջամիտ է՝ հաշվի առնելով տոնական ոչ աշխատանքային և հանգստյան օրերի երբեմն իրար հաջորդելու հնարավորությունը:	Առաջարկությունն ընդունվել է: Խմբագրվել է:	Ընդունվել է
24	ՀՀ կառավարություն	Նոր խմբ.՝ հոդված 30	Հաշվի առնելով, որ ներկայացված նախագծով լրացվում է նոր 129.3-րդ հոդված՝ առաջարկվում է համապատասխան լրացում կատարել նաև օրենսգրքի 287-րդ հոդվածում: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ ԱԺ կողմից 23.10.2019թ. ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-206-Ն օրենքը (ուժի մեջ մտնելու ժամկետը՝ 30.11.2019թ.), որով խմբագրվել է օրենսգրքի 287-րդ հոդվածը, և սահմանվել է վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման գանգատարկման (բողոքարկման) նոր կարգ՝ բլանկետային նորմով առանձնահատկություն նախատեսելով ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառի իրավախախտումների համար:	Առաջարկությունն ընդունվել է: Նախագիծը լրացվել է նոր 30-րդ հոդվածով, որով իրավախախտումների ցանկը լրացվել է 129.3 հոդվածով:	Ընդունվել է
25	ՀՀ կառավարություն	Հոդված 27 (նոր խմբ.՝ 31)	Առաջարկվում է վարելու իրավունքի կասեցման կամ զրկման ձևով կիրառված վարչական տույժի բողոքարկման դեպքում չկասեցնել որոշման կատարումը, քանի որ	Առաջարկությունն ընդունվել է: Օրենսգրքի 290-րդ հոդվածում կատարվել է	Ընդունվել է

			վարորդները բոլոր դեպքերում կբողոքարկեն դրանք՝ անկախ որոշման հետ համաձայն լինելու կամ չլինելու համգամանքից: Առաջարկությունը բխում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 74-րդ հոդվածի իրավակարգավորումների տրամաբանությունից:	համապատասխան փոփոխություն:	
26	ՀՀ կառավարություն	Հոդված 29 (նոր խմբ.՝ 33)	Առաջարկվում է լրացվող 303.1 հոդվածի 2-րդ մասը, որով սահմանվում է տուգանային միավորի ձևով վարչական տույժ նշանակելու մասին որոշման մեջ միավորների մնացորդի չափը պարտադիր նշելու պահանջ, նախագծից հանել: Գործնականում այն կարող է որոշակի խնդիրներ առաջացնել մնացորդի չափի ակտուալության տեսանկյունից, մասնավորապես այն դեպքերում, երբ որոշումը հանձնվում է ոչ տեղում, և հանձնման (ծանուցման) համար սահմանված ժամանակահատվածում անձը կատարում է այլ խախտումներ, որոնց համար նրա նկատմամբ կիրառվում է տուգանային միավորի ձևով վարչական տույժ, կամ ընդհակառակը՝ նախկին որոշումների բողոքարկման արդյունքում կասեցվում է դրանց կատարումը, և փոխվում միավորների հանրագումարը: Արդյունքում միավորների մնացորդի մասին նշումը ժամանակավրեպ է դառնում:	Առաջարկությունն ընդունվել է: Լրացվող 303.1 հոդվածից հանվել է 2-րդ մասը: Միաժամանակ, ներկայացված խնդրին կտրվի տեխնիկածրագրային լուծում, մասնավորապես՝ վարորդներին հնարավորություն կտրվի իրենց միավորների՝ տվյալ պահին առկա մնացորդի վերաբերյալ տեղեկությունները ստանալ առցանց եղանակով:	Ընդունվել է
27	ՀՀ կառավարություն	Հոդված 36 (նոր	Առաջարկվում է օրենսգրքի 318 հոդվածն ուժը	Առաջարկությունն ընդունվել	Ընդունվել է

		խմբ.՝ 40)	կորցրած ճանաչել, քանի որ վարչական ակտը չի կարող կատարվել մինչև սահմանված կարգով դրա ուժի մեջ մտնելը, և գործող կարգավորումը չի բխում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի տրամաբանությունից:	է, հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել:	
28	ՀՀ կառավարություն	Հոդված 37 (նոր խմբ.՝ 41)	Առաջարկվում է որպես նախագիծն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2020 թվականի հունվարի 1-ը՝ տուգանային միավորների համակարգը գործարկելով միայն տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված իրավախախտումների համար, իսկ ճանապարհապարեկային տեսուչների կողմից արձանագրվողների մասով սահմանել ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ՝ տեխնիկական ու ծրագրային խնդիրները կարգավորելու նպատակով: Առաջարկությունը վերաբերում է նաև մյուս նախագծերին:	Առաջարկությունն ընդունվել է, անցումային դրույթը խմբագրվել է: Բոլոր նախագծերի համար ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանվել 2020թ. հունվարի 1-ը:	
	ՀՀ ԱԺ պատգամավոր Արմեն Խաչատրյան	Նոր խմբ.՝ հոդված 32	Առաջարկվում է Օրենսգրքի 291-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է
«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ					
29	ՀՀ կառավարություն	Նոր խմբ.՝ հոդված	Առաջարկվում է Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ	Առաջարկությունն ընդունվել	Ընդունվել է

		2	և 5-րդ մասերը խմբագրել՝ պետական ու համայնքային մարմինների համար նախատեսելով տրանսպորտային միջոցը շահագործող անձի տվյալները էլեկտրոնային համակարգում ամրագրելու պարտականություն, իսկ շահագործող կցված չլինելու դեպքում որպես վարչական ակտի հասցեատեր նախատեսել մարմնի գլխավոր քարտուղարին կամ աշխատակազմի ղեկավարին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ մարմնի (կազմակերպության) ղեկավարին: Առաջարկության նպատակը պետական և համայնքային միջոցների խնայումն է: Այսպես, գործող կարգի համաձայն վարչական ակտի հասցեատիրոջը պարզելու համար հարցումներ են ուղարկվում պետական ու համայնքնային մարմիններին (կազմակերպություններին), 1 նամակի արժեքը՝ 355 դրամ է: Պաշտոնական տվյալով 2018թ. կատարվել է 14.655 հարցում: Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր հարցմանն ուղարկվում է նաև պատասխան, ուստի կարելի է պարզ հաշվարկի արդյունքում փաստել, որ գործող կարգով ակտի հասցեատերերին պարզելու համար միայն 2018թ. պետությունն ու համայնքները ծախսել են 10 մլն 400 հազար դրամից ավելի բյուջետային միջոցներ:	է, կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագիծը լրացվել է նոր 2-րդ հոդվածով, իսկ անցումային դրույթներում (հոդված 8) նախատեսվել է պետական և համայնքային մարմինների կողմից արդեն իսկ շահագործվող տրանսպորտային միջոցների մասով նշված պարտականությունը կատարելու ժամկետ:	
30	ՀՀ կառավարություն	Հոդված 2, կետ 3 (նոր խմբ.՝ հոդված	Առաջարկվում է Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասության «պետք է կցվեն» բառերից հետո նշված «գանգատը»	Առաջարկությունն ընդունվել է: Կետը խմբագրվել է:	Ընդունվել է

		3, կետ 4)	բառը ևս փոխարինել «դիմումը» բառով:		
31	ՀՀ կառավարություն	Հոդված 5 (նոր խմբ.՝ 6) Հոդված 6 (նոր խմբ.՝ 7)	Նախագծով Օրենքը նախատեսվում է լրացնել 7.3 հոդվածով: Հաշվի առնելով, որ ՀՀ ԱԺ կողմից 23.10.2019թ. ընդունվել է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-205-Ն օրենքը (ուժի մեջ մտնելու ժամկետը՝ 30.11.2019թ.), որով արդեն իսկ լրացվել է այդ հերթական համարով հոդված, անհրաժեշտ է փոխել համարակալումը:	Առաջարկությունն ընդունվել է: 7.3 հոդվածի փոխարեն նախատեսվել է 7.6:	Ընդունվել է
«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ					
32	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող՝ գործող օրենքի 13-րդ հոդվածի 20.2-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել, որ շահագործող անձի ներկայությունը և իր անձնական տվյալները տրամադրելու վերաբերյալ գրավոր համաձայնությունը պարտադիր են նույն հոդվածի 20.1 մասով նախատեսված դեպքում: Առաջարկվում է նաև տեղերով փոխել 20.3 և 20.4 մասերը՝ տրամաբանական հաջորդականությունն ապահովելու համար:	Առաջարկությունն ընդունվել է: Դրույթը խմբագրվել է:	Ընդունվել է

33	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Առաջարկվում է նախատեսել կարգավորում անձի մահից հետո տրանսպորտային միջոցը փաստացի շահագործող անձանց (ժառանգների) կողմից օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված կարգով որպես շահագործող գրանցվելու հնարավորության վերաբերյալ:	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 13-րդ հոդվածում լրացվել է նոր 20.7 մաս:	Ընդունվել է
34	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածով գործող օրենքի 13-րդ հոդվածում լրացվող 20.8-րդ մասում (նոր խմբ.՝ մաս 20.10) առաջարկվում է նախատեսել էլեկտրոնային եղանակով շահագործող անձի տվյալները հայտնելու հնարավորություն նաև տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող սեփականատերերի համար:	Առաջարկությունն ընդունվել է: Դրույթը խմբագրվել է:	Ընդունվել է
«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ (նոր)					
35	ՀՀ կառավարություն		ՀՀ ԱԺ կողմից 23.10.2019թ. ընդունվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-207-Ն օրենքը (ուժի մեջ մտնելու ժամկետը՝ 30.11.2019թ.): Օրենսգրքի 3-րդ հոդվածում նախատեսվել է, որ ՎԻՎ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն **վարչական կարգով** բողոքարկվելուց	Առաջարկությունն ընդունվել է: Փաթեթը լրացվել է նոր նախագծով, որի 1-ին հոդվածով կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է

			(գանգատարկվելուց) հետո: Մինչդեռ մեկ այլ լրացմամբ, որպես հայցադիմումը վերադարձնելու հիմք է նախատեսվել միայն **վերադասության կարգով** բողոքարկված չլինելը: Առաջարկվում է շտկել օրենքում տեղ գտած վրիպակը՝ նկատի ունենալով, որ վերադասության կարգով բողոքարկումը վարչական կարգով բողոքարկման տեսակներից մեկն է:		
36	ՀՀ կառավարություն		Առաջարկվում է համապատասխան լրացում կատարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածում, որով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու կամ այդ իրավունքից զրկելու ձևով վարչական տույժ նշանակելու վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու դեպքում դրա կատարումը կասեցնելու մասով բացառություն կսահմանվի՝ հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտերի անալոգիայով:	Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվել է համապատասխան կարգավորում:	Ընդունվել է
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ					
37	ՀՀ կառավարություն	Նոր խմբ.՝ հոդված 1	Առաջարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի տրամաբանությամբ Օրենքի 74-րդ հոդվածում կատարել համապատասխան լրացում, որով կնախատեսվի բացառություն տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու կամ այդ իրավունքից զրկելու ձևով վարչական տույժ	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է

			նշանակելու վերաբերյալ վարչական ակտը բողոքարկելու դեպքում դրա կատարումը կասեցնելու մասով: Առաջարկությունը համահունչ է ՎԻՎ օրենսգրքի 290-րդ հոդվածում, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարվող համապատասխան լրացումներին:		
«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ (նոր)					
38	ՀՀ կառավարություն		Առաջարկվում է Ճանապարհային ոստիկանության կողմից կայացված վարչական պատասխանատվություն նախատեսող ակտերի դեմ դատարան բերվող բողոքների համար գանձել 4000 դրամ պետական տուրք՝ ընդհանուր հիմունքներով: Ներկայումս ՀՀ վարչական դատարանում օրական լսվում է ՃՈ վարչական ակտերի անվավերության պահանջով միջինը 100 դատական գործ: ՀՀ վարչական դատարանում ստացվող հայցադիմումների ընդհանուր թվի 55-60%-ը կազմում են ՃՈ դեմ՝ համապատասխան վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումները (տարեկան շուրջ 8-10 հազար նոր հայցադիմում, չհաշված նախորդ տարիներից փոխանցվող գործերը), և նշված թիվն աճի միտում ունի: Առաջարկության համար հիմք է հանդիսանում նաև այն հանգամանքը, որ տուգանային միավորների համակարգի	Առաջարկությունն ընդունվել է: Օրինագծերի փաթեթը լրացվել է «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով, որով հանվել է նշված ակտերի բողոքարկման համար սահմանված արտոնությունը:	Ընդունվել է

			ներդրմամբ կաճի բողոքարկումների թիվը՝ անկախ որոշման հետ համաձայն լինել կամ չլինելու հանգամանքից, ինչն էապես կազդի և դատարանների ծանրաբեռնվածության վրա, և որոշ դեպքերում կնպաստի պատասխանատվության վրա հասնելը արհեստականորեն ձգձգելուն՝ հաշվի առնելով վարչական դատարանում գործերի քննության ժամկետները:		